ֆբրտ, յամի 1654–6։ Դարձեալ նոյնպէս եկեղեցական պատմիչ մի՝ Մահիպուշ, ցաքոբիկ եպիսկոպոս Մըմբեճացի։

Աբուսահլ ի պատմութեան՝ Մարտիրոսաց կոչուած թուականը գործածէ, որ կը սկսի Դիոկլետիանոսի հալածանաց հրովարտակէն, ի 29 օգոստոսի 284 փրկչական տարւոյ. երբեմն այլ հիճրէդի թուականը յիշէ։ Հմուտ է մահմէտական օրինաց և պատմութեանց, և ոչ շատ խորշող. երկար գրելով և իբր բուն նպատակ՝ Ղիտեաց եկեղեցիքն և վանորայքը՝ աւելի յարեալ կ՚երեւի այս ազգի, իբր համակրօն, և անոնց մէջ ծնած և սնած. թէ և հաւանօրէն՝ քանի մի դարէ ի վեր յԵգիպտոս գաղթած Հայոց սերունդ է. թուի թէ և մեր նոր գաղթականաց նման՝ բնիկ հայրենի լեզուին անգէտ կամ ոչ շատգէտ, արաբերէն գրեր է, իբրեւ գիտնական լեզուաւ, որոյ հմտութիւնն անտարակոյս է, նա և շատ պատմիչներ յիշելէն։ Բաց ի սկզբան բաւական երկար Հայոց վրայօք գրածէն, այլ և այլ տեղ այլ յիշէ զնոյն Հայ պաշտօնեայս և վ.զրուկս, և ուր որ Հայոց եկեղեցի և վանք կայ (զորս մենք այլ թարգմանօրէն պիտի յիշեմք). բայց ամենեւին իր հայազգի ըլլալը կամ ազգասիրութիւն՝ չի ցուցներ. և ընդհանրա-